2022, № 1, 34-45 *Միջազգային հարաբերություններ*
https://doi.org/10.46991/BYSU:D/2022.13.1.034

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

ՓԱՅԼԱԿ ԵՆԳՈՅԱՆ

Հայկական և չինական քաղաքակրթությունները հնագույններից են աշխարհում: Չնայած երկրների աշխարհագրական դիրքերի, չափերի և բնակչության թվաքանակների տարբերություններին՝ այս երկու ժողովուրդներն ունեն ընդհանուր պատկերացումներ միջազգային կյանքի և մասնավորապես «փափուկ ուժի» կիրառման մասին թե՛ արտաքին քաղաքականության, թե՛ ներքին միջավայրում: Նրանց քաղաքականությունն ուղղված է «դեպի ներս», այսինքն՝ սեփական ժողովրդի ինքնությունն ու համախմբվածությունը ազգային մշակույթի հիմքի վրա պահպանելուն: Ներկայումս հայ ժողովրդի գերակշիռ մասը գտնվում է բոլորովին այլ սոցիալ-մշակութային միջավայրում: Առաջ է գալիս հայկական սփյուռքի ներկայացուցիչների ինքնության, մշակույթի, լեզվի, կրոնի, ինչպես նաև համայն հայության համախմբվածության պահպանման մասին հարցը: Այս առումով անհրաժեշտ է օգտագործել Չինաստանի հաջող փորձը, որը համեմատաբար վերջերս է արտաքին քաղաքականության մեջ կիրառում «փափուկ ուժ»: Նման քաղաքականության հիմնական գործիքներից է նրա ուրույն քաղաքակրթական արժեհամակարգի առաջմղումը, որն իրականացվում է, ի թիվս այլոց, Սփյուռքի օգնությամբ:

Բանալի բառեր – *փափուկ ուժ, ինքնություն, մշակույթի քաղաքական հայեցակարգ, մշակույթի ճանաչելիություն, քաղաքակրթական արժեքներ*

Հակառակ տարածված այն կարծիքի, թե միայն խոշոր և զարգացած երկրներն են օժտված «փափուկ» և «խելացի» ուժ կիրառելու ներուժով, կան նաև փոքր երկրներ ու ժողովուրդներ, որոնք ևս ունեն «փափուկ ուժ» կիրառելու բավականին լայն հնարավորություններ: Դա հատկապես վերաբերում է Հայաստանին, որն անկախության առաջին տարիներին զգալի աջակցություն ստացավ Սփյուռքի կառույցներից թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության ոլորտներում: Դրա շնորհիվ շրջափակման մեջ գտնվող հանրապետությունը հնարավորություն ստացավ հավասարակշռված հարաբերություններ պահպանելու տարածաշրջանային և համաշխարհային ուժային կենտրոնների հետ՝ անկախ միմյանց հետ նրանց հարաբերություններից: Սրա հետ մեկտեղ կարելի է արձանագրել, որ «փափուկ ուժի» քաղաքականությունը Հայաստանում կիրառվել է դեռ վաղնջական ժամանակներից: Այս առումով ակներև է ձգտումների նմանությունը աշխարհի երկու

հնագույն քաղաքակրթությունների՝ հայկականի և չինականի միջև։ Չնայած աշխարհագրական դիրքերի, երկրների չափերի ու բնակչության թվաքանակների տարբերություններին՝ այս երկու ժողովուրդները պատմության ընթացքում հիմնականում հասարակական-քաղաքական կյանքի վրա ազդելու նմանաբնույթ քայլեր են ձեռնարկել, որոնք ոչ միայն պահպանել են իրենց մշակութային ավանդույթները, այլև թույլ են տվել այդ ժողովուրդներին ամրապնդել, իսկ կորցնելուց հետո նաև վերականգնել իրենց անկախ պետականությունը։

Պատմականորեն այնպես է ստացվել, որ Հայաստանը գտնվել է մշտապես հակամարտող կայսրությունների միջև, որոնք ձգտում էին գերիշխող դիրք գրավել տարածաշրջանում, այդ թվում՝ հայերին իրենց սոցիոմշակութային միջավայրին ձուլելով։ Եվ դարեր շարունակ հայությունը մշտապես կանգնած է եղել այդ ծանրագույն իրադրություններում սեփական ինքնությունը պահպանելու խնդրի առջև։ Դրա համար անհրաժեշտ էր օգտագործել «փափուկ ուժի» ամբողջ ներուժը՝ ուղղված «ներքին գոյակերպին», այսինքն՝ սեփական ժողովրդի ինքնությունը պահպանելուն՝ օգտագործելով նրա ինքնօրինակ մշակույթը։ Հայկական պետության կազմալուծումը ստիպեց հայ աշխարհիկ և կրոնական գործիչներին մտորել ազգային գիտակցության մեջ նոր պետականություն ու քաղաքական ինքնուրույնություն ձեռք բերելու ձգտումը պահպանելու մասին։ Նրանք այս խնդրի լուծումը պայմանավորում էին առաջին հերթին լեզվական, գաղափարական և մշակութային ինքնուրույնության ու միասնության հաստատմամբ։ Հոգևոր նույնականացումը դարձավ անկախ պետություն ստեղծելու գաղափարը հիմնավորելու անուղղակի, իսկ որոշ դեպքերում՝ նաև ուղղակի գործոն։ Ուստի դարեր շարունակ նման քաղաքականության գործիք եղել է մեր ժողովրդի մշակույթը։ Հենց այս ժամանակաշրջանում է հայ մշակույթը դրսևորվել որպես քաղաքական ուժ՝ ձևավորելով, Կ. Ա. Միրումյանի բնորոշմամբ, իր «քաղաքական հայեցակարգը»[1]։

Մշակույթի քաղաքական հայեցակարգը ձևակերպելու առաջին փորձը, որը կոչված էր ապահովելու հայ ժողովրդի շարունակական զարգացումը, կատարեց դեռ Տիգրան Բ Արտաշեսյանը։ Նրա գահակալության տարիներին Հայաստանը կանգնել էր հետևյալ խնդրի առջև. գտնվելով հելլենական աշխարհի տիրույթում և շատ բաներ փոխառելով հելլենական երկրների մշակույթից՝ պահպանել սեփական ժողովրդի հոգևոր-մշակութային ինքնատիպությունը։ Բացի այդ, հարկավոր էր մեկ միասնական հոգևոր հիմքի վրա միավորել ինքնիշխան թագավորության տարբեր ժողովուրդներին ու ցեղերին և այդ հիմքի վրա ձևավորել էթնոսոցիալական մեկ հանրույթ։ Ելքն այն էր, որ ստեղծվի մշակույթի այնպիսի քաղաքական հայեցակարգ, որը պետական քա-

[1] Տե՛ս **Мирумян К. А.** История политической науки. Ч. II. Средневековье. Возрождение. Реформация, Ер., Изд-во РАУ, 2005, 446 էջ։

ղաքականության աստիճանի կբարձրացնի հասարակական կյանքի հելլենականացումը: Դրանով իսկ լուծվեց ոչ միայն թագավորության բոլոր ժողովուրդներին կենտրոնացված ուժեղ պետության շուրջը համախմբելու հարցը, այլև ապահովվեց հասարակական-տնտեսական առաջընթաց, որը հատուկ էր այդ շրջանի հելլենիստական բոլոր երկրներին: Ուրվանշվեցին հայկական և հռոմեական (ռոմանական) մշակույթների շփման ընդհանուր գծերը, ինչը պետք է նպաստեր երկու տերությունների քաղաքական խաղաղ համակեցությանը: Ընդհանուր առմամբ, Տիգրան Բ-ի՝ հելլենիզմի պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը, ըստ Կ. Ա. Միրումյանի, դարձավ «քաղաքական հակակշիռ հռոմեական էքսպանսիային, հռոմեականացմանը…»[2]: Սակայն հիմնական ձեռքբերումն այն էր, որ հելլենիզմի տարածման միջոցով Տիգրանը ձգտում էր պահպանել հոգևոր մշակույթի հայկական տարրերը: Հենց այդ ժամանակվանից մշակույթը ձեռք բերեց քաղաքական բովանդակություն «փափուկ ուժի» տեսքով:

III դարում երկու հարևան հզոր տերությունների (Հռոմի և Սասանյան Պարսկաստանի) միջև հակամարտությունը՝ հանուն իրենց համար ռազմավարական առումով կարևոր Հայաստանի նկատմամբ գերիշխանության, ֆեոդալիզմի արմատավորումն ու դրան զուգընթաց՝ հայ նախարարների տրոհումը, երկպառակությունը և այլն խարխլեցին պետականության հիմքերը: Արտաքին ներխուժումը զսպելու ընդունակ միակ իրական ուժը ազգային միասնությունն էր, որին հասնել հնարավոր էր համազգային շահերը պաշտպանող միասնական գաղափարի միջոցով: Նման գործառույթ կարող էր իրականացնել գաղափարախոսական այն համակարգը, որը իր մեջ կհամադրեր կենտրոնացված իշխանության, պետական ամբողջականության և ազգային ինքնատիպության գաղափարները: Հայ ժողովրդի համար նման համակարգ դարձավ քրիստոնեությունը:

Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելը գաղափարական-տեսական նախադրյալներ ստեղծեց ինչպես Պարսկաստանից, այնպես էլ տվյալ ժամանակաշրջանում հեթանոս Հռոմից մշակութային-գաղափարական տարանջատման համար: Սա ապահովեց Հայաստանի գաղափարական և անուղղակիորեն քաղաքական անկախությունը, ինչն այնքան կարևոր պայման է անկախ պետականության պահպանման համար: Հայաստանի «քրիստոնեացման» քաղաքական հայեցակարգը կոչված էր միասնական գաղափարական հիմքի վրա ամրապնդելու խարխլվող պետական ամբողջականությունը և պահպանելու հայության ազգային ինքնատիպությունը թշնամական միջավայրում:

Հայաստանում քաղաքական իրադրությունը կտրուկ փոխվեց 387 թվականին, երբ երկիրը բաժանվեց Իրանի և Բյուզանդիայի միջև: Արևելյան Հայաստանում թագավորությունը գոյատևեց մինչև 428 թվակա-

[2] Նույն տեղում, էջ 260:

նը: Սակայն հենց այս ժամանակահատվածում իրական դարձավ պետական ամբողջականությունը կորցնելու սպառնալիքը: Կենտրոնական իշխանության ամրապնդման հետ կապված խնդիրներն իրենց տեղը զիջեցին ավելի դժվարլուծելի ու ճակատագրական հիմնախնդրի՝ ազգային կեցության ինքնատիպության պահպանմանը, որն ավելի էր խորանում սաստկացող կրոնագաղափարախոսական արտաքին էքսպանսիայի հետևանքով: Գոյություն ունեցող գաղափարական համակարգը՝ ի դեմս միաստված քրիստոնեության, չէր հասցրել դեռ ամբողջովին բացահայտել իր պոտենցիալ հնարավորությունները և չէր դարձել համազգային կրոն, մեկ միասնական հոգևոր և գաղափարական ուժ: Պատմական այս առաքելությունն իրականացնելու հիմնական խոչընդոտն այն էր, որ ծիսակատարություններն ու անգամ քրիստոնեական գաղափարների քարոզչությունը չէին կատարվում մայրենի լեզվով: Բացի այդ, Հայաստանի մասնատումից հետո թե՛ Պարսկաստանը, թե՛ քրիստոնյա Բյուզանդիան վերսկսեցին գաղափարական ու կրոնական ուծացման քաղաքականությունը և առաջին հերթին՝ լեզվական քաղաքականության ոլորտում: Միայն ազգային գրերի ստեղծումը կարող էր ամրապնդել Հայ եկեղեցու դիրքերը: Սա մի կողմից պատնեշ կդառնար ասորական եկեղեցու միջոցով Պարսկաստանի գաղափարական-կրոնական էքսպանսիայի ճանապարհին, մյուս կողմից՝ կամրապնդեր Հայ եկեղեցու ազգային բնույթը՝ հնարավորություն տալով լեզվական հիմքի վրա տարանջատվելու հունական եկեղեցուց, որին աջակցում էր Բյուզանդիան:

Այս խնդիրը փայլուն կատարեց մեծ լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցը 405 թ.: Նա, համադրելով այբուբենի և գրի կառուցման տարբեր սկզբունքները, ստեղծեց որակապես նոր այբուբեն: Հայոց գրերի գյուտը հզոր հիմք դարձավ հանուն հոգևոր ու մշակութային ինքնատիպության ծավալված պայքարում և դրա միջոցով՝ «ազգային կամ պետական անկախության պահպանման կամ վերականգնման» համար պայքարում[3]: Պատմամշակութային այս ակտը միջնորդավորված էր եկեղեցու և կրոնի պահանջմունքներով, որոնք իրենց հերթին երկրի քաղաքական և գաղափարական կոնկրետ իրադրության ծնունդ են՝ ի վերջո ստորադասվելով համազգային շահերին:

Ազգային գրերի ստեղծումը հնարավորություն տվեց ձերբազատվելու հունարեն և ասորերեն լեզուների «գերակայությունից», համապատասխան քրիստոնեական եկեղեցիների հոգևոր, քաղաքական և գաղափարական ազդեցությունից, ինչը նշանակում էր նաև յուրատեսակ մշակութային պատնեշի ստեղծում նրանց սատարող տերությունների՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի քաղաքական-գաղափարական ագրեսիայի ճանապարհին: Դրա շնորհիվ քրիստոնեությունը պատմական կարճ ժամանակահատվածում դարձավ տիրապետող համազգային կրոն, իսկ

[3] Տե՛ս **Ս. Ս. Արևշատյան,** Փիլիսոփայական գիտության ձևավորումը Հին Հայաստանում (V-VI դդ.), Եր., Հայաստան, 1973, էջ 33-34:

եկեղեցին՝ համազգային շահերի արտահայտիչն ու պաշտպանը: Արդյունքում հայ ժողովրդի հետագա պայքարը հանուն հավատի և քրիստոնեական եկեղեցու իրավաչափորեն նույնացվեց ազգային, պետական և քաղաքական անկախության համար մղվող պայքարի հետ:

Տիգրան Բ-ի ժամանակներից ի վեր հայ մշակույթի քաղաքական հայեցակարգերը ամբողջովին ծառայել են համազգային խնդիրների լուծմանը, որոնք, ելնելով առկա իրողություններից, ենթարկվել են էական փոխակերպման՝ կայսերական ուղղվածությունից մինչև սեփական պետականությունը վերակերտելու ձգտում և ազգային ինքնատիպության պահպանում: Այս հայեցակարգերի նշանակությունը հանգում է այն բանին, որ տևական ժամանակ (Ք.ծ.ա. I դ. – V դար) դրանց հաջողվել է լուծել մի շատ կարևոր խնդիր՝ ձևավորել հայ ժողովրդի ազգային գիտակցությունը: Հայկական մշակույթի հետագա զարգացումը, նրա «ոսկեդարի» հաստատումը հնարավորություն տվեցին ժողովրդի ազգային գիտակցությունը զարգացնելու մինչև ինքնագիտակցության մակարդակի, որի դրսևորումներից մեկն էլ համարվում է ազգային գաղափարախոսությունը:

V դարում հայ մեծ պատմիչների՝ Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ագաթանգեղոսի, ինչպես նաև փիլիսոփաների (Եզնիկ Կողբացի և այլք) ստեղծած երկերը հիմք տվեցին առաջադրելու ավելի դինամիկ արժեհամակարգ, քան մշակույթի քաղաքական հայեցակարգն էր, որն է՝ ազգային գաղափարախոսությունը: Վերջինս կոչված է գաղափարական հենք դառնալու ազգի բոլոր օրախնդիր հարցերի լուծման համար, այդ թվում՝ կիրառելով «փափուկ ուժի» քաղաքականությունը:

Ազգային գաղափարախոսության հիմքերի ստեղծման գործում առանձնահատուկ է «հայ պատմագրության հայր» Մովսես Խորենացու վաստակը: Նրան հաջողվեց հանճարեղ կերպով կյանքի կոչել մշակութային գործոնը քաղաքական-գաղափարախոսականի վերածելու գաղափարը: Նրա պատմաքաղաքական հայեցակարգի հիմնարար գաղափարն այն է, որ հայ ժողովուրդը հասակակից է աշխարհի հնագույն քաղաքակրթություններին, հայկական պետականությունը ձևավորվել է երկրագնդի առաջին պետությունների հետ միաժամանակ, և այն վերականգնելը հայ ժողովրդի բնական իրավունքն է[4]:

Մ. Խորենացին հետևողականորեն զարգացնում է այն միտքը, որ հայրենասիրությունն ու հանուն հայրենիքի ազատության անձնազոհության դիմելու պատրաստակամությունը բարձրագույն առաքինություններ են ինչպես առաջնորդների, այնպես էլ ողջ ժողովրդի համար: Խորենացին, համամիտ լինելով Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի խոսքերի հետ, հաստատում է, որ ավելի լավ է ունենալ թեկուզ վատ, բայց սեփական պետություն, քան լավը, բայց օտարինը: «Եվ ինչպե՞ս

[4] Տե՛ս **Կ. Միրումյան, Ս. Արևշատյան,** Հայ փիլիսոփայության պատմություն, Եր., Լուսաբաց, 2007, էջ 260-261:

կարելի է այդ իմ հիվանդ ոչխարը փոխել առողջ գազանի հետ, որի հենց առողջությունը մեզ համար պատուհաս է»[5]:

Մ. Խորենացու քաղաքական հայեցակարգը չի սահմանափակվում հայկական պետականության վերականգնման անհրաժեշտության մասին պնդումներով: Նա արծարծում է նաև ազգային ինքնապահպանության այնպիսի կարևոր թեմաներ, ինչպիսիք են պետություն-ընտանիք փոխհարաբերությունը, հասարակության իրավաքաղաքական հիմքը, պետության և ժողովրդի հարաբերությունները եկեղեցու հետ, պատերազմի և խաղաղության հիմնախնդիրները և այլն: Մ. Խորենացին չի սահմանափակվում հայ ժողովրդի կյանքում տեղ գտած պատմական իրադարձությունների պարզ շարադրմամբ: Նրա վաստակը միայն այդ չէ, թեև շատ պատմաբաններ հակված են դիտարկելու Մ. Խորենացուն հենց որպես ժամանակագիր, ինչով էապես նսեմացնում են նրա դերը ժողովրդի հոգևոր կյանքի զարգացման գործում:

Նրա ստեղծագործության հիմնական բովանդակությունն այն է, որ նա պատմական փաստերը գնահատում է ազգային շահերի դիտանկյունից, ընդ որում, օգտագործելով ժողովրդի «պատմական հիշողությունը» լոկ մեկ նպատակով՝ ամրապնդելու հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը և ուղղորդելու այն դեպի ապագա, նպատակաուղղելով կոնկրետ համազգային խնդիրների լուծմանը: Այս առումով Մ. Խորենացուն պետք է համարել ազգային գաղափարախոսության հիմնադիրը, որը պետք է քաղաքական իրականության զարգացման վեկտորի դեր կատարեր:

Հայ ժողովրդի պատմության ամբողջ ընթացքում նկատվում են սերտ փոխհարաբերություններ ազգային գաղափարախոսության և ժողովրդի մշակույթի քաղաքական ուղղվածության միջև, որոնք հաճախ փոխարինում էին միմյանց: Քաղաքական իրականության զարգացման բախտորոշ ժամանակաշրջաններում նշյալ երևույթներից յուրաքանչյուրը «իր վրա է վերցրել» հայ ժողովրդի ինքնապահպանության, նրա համախմբման ու միաբանման կարևորագույն խնդիրները կատարելու պատասխանատվությունը: Հայկական մշակույթի «ոսկեդարից» հետո ընկած ժամանակահատվածում այս խնդիրների լուծման գործում գլխավոր դերը կատարեց Հայ առաքելական եկեղեցին: Հայոց թագավորության վերացումից հետո այն ստանձնեց պետական-քաղաքական գործառույթներ:

Միանգամայն օբյեկտիվ պատճառներով եկեղեցական-կրոնական և գաղափարաքաղաքական հարաբերությունները հանդես էին գալիս որպես միասնական գործընթացի երկու երեսներ, որոնք ինչ-որ իմաստով նույնական էին: Ավելին, պատմական որոշակի իրավիճակներում եկեղեցական-կրոնական գործոնը հաճախ ոչ միայն ստվերում, այլև փոխարինում էր գաղափարականին: Պատմական որոշակի պայմաններում դա առաջ էր բերում գաղափարաքաղաքական այնպիսի դոկտրին

[5] **Մովսես Խորենացի,** Պատմություն Հայոց, Եր., 1981, էջ 98:

մշակելու անհրաժեշտություն, որը ոչ միայն կապահովեր ազգային-եկեղեցական ինքնուրույնությունը, այլև կչեզոքացներ հարևան երկրների հնարավոր ագրեսիվ ոտնձգությունները: «Փափուկ ուժի» քաղաքականության այս յուրօրինակ կիրառման շնորհիվ հայ ժողովրդի պատմության ողջ միջնադարյան շրջանը երկու անգամ նշանավորվեց պետականության վերականգնմամբ՝ Բագրատունիների թագավորության և Կիլիկիայի հայկական թագավորության, ինչպես նաև թույլ տվեց հայ ժողովրդին պահպանել իր ազգային ինքնատիպությունը: Մշակույթի քաղաքական հայեցակարգի և ազգային գաղափարների հաջորդափոխության համանման երևույթ դիտվել է նաև հայ ժողովրդի պատմության հետագա փուլերում՝ հասնելով ընդհուպ խորհրդային ժամանակաշրջան:

Համեմատելով սոցիալ-քաղաքական պատմական գործընթացները Հայաստանում և Չինաստանում, կարող ենք եզրակացնել, որ երկու ժողովուրդների էլիտաների «փափուկ ուժի» քաղաքականությունն ուղղված էր, պատկերավոր ասած, «դեպի ներս», այսինքն՝ սեփական ժողովրդի ինքնությունը պահպանելուն՝ օգտագործելով մշակութային-քաղաքակրթական առանձնահատկությունները: Սակայն եթե առաջին դեպքում դրա նպատակը այլ ժողովուրդների կողմից ստրկացման իրավիճակներում ձուլումը կանխելն էր, ապա մյուս դեպքում՝ ասիական հսկայածավալ տարածքներում բնակվող ժողովրդի միասնականությունը պահպանելը:

Ցանկացած «փափուկ ուժ» կարիք ունի գաղափարական հիմնավորման, առավել ևս եթե այն ուղղված է «դեպի ներս»: Սակայն բնավ ոչ բոլոր երկրներն ունեն այն կիրառելու հստակ մշակված ռազմավարություն: Ցավոք, Հայաստանը նման երկրներից մեկն է, մինչդեռ նրա համար չափազանց արդիական է այդպիսի ռազմավարություն ստեղծելու խնդիրը: Հայաստանի և հատկապես նրա էլիտայի կողմից «փափուկ ուժի» կիրառման ռազմավարություններ մշակելը կօգնի որոշելու ազդեցության այս մեթոդը զարգացնելու առաջնահերթությունները, համակարգելու դրա գործունեությունը և ռեսուրսները ճիշտ հունով ուղղորդելու՝ հստակ խնդիրներ լուծելու համար:

Ներկայումս հայ ժողովրդի գերակշիռ մասը գտնվում է օտար երկրներում, բոլորովին այլ սոցիոմշակութային միջավայրում: Այդ իսկ պատճառով օրակարգային է դառնում Սփյուռքում հայապահպանության հարցը, հայ ազգի, նրա մշակույթի, լեզվի, կրոնի ու ինքնատիպության պահպանման հիմնախնդիրը: Խոսքը նոր արժեհամակարգի՝ ժամանակակից ազգային գաղափարախոսության ձևավորման մասին է, որն անհրաժեշտ է աշխարհի ողջ հայության հոգևոր, լեզվական և գաղափարական միասնության համար:

Ազգային գաղափարախոսության արդիական դրույթներ են դառնում այն գաղափարները, որոնք հայ ժողովրդին օժտում են աշխարհի հնագույն քաղաքակրթություններից մեկի կարգավիճակով: Հայ ժողովուրդն արդեն ներկայանում է ոչ թե որպես մշտական փորձություննե-

րի ենթարկվող և զանազան «պատասխան» քայլերի պատրաստ ազգ, այլ իբրև քաղաքական բնականոն վիճակի հասած ժողովուրդ, որը ձգտում է գիտակցելու իր դրական դերը մարդկության զարգացման գործում: Հայը պետք է կարողանա գնահատել այն արժեքավորը, որը կարող է տալ աշխարհին, և դրա դիմաց ստանալ համաշխարհային հանրության համարժեք վերաբերմունքը: Գաղափարական այսպիսի կողմնորոշումը հնարավորություն է տալիս համախմբելու ոչ միայն ՀՀ քաղաքացիներին, այլև աշխարհասփյուռ ամբողջ հայությանը:

Երիտասարդ հայկական պետությունը ավելի ու ավելի է գիտակցում իր նշանակությունը և ամեն կերպ փորձում է քայլել ժամանակին համընթաց՝ համայն մարդկության զարգացմանն իր էական ներդրումը բերելու նպատակով: Այս հեռահար նպատակներն իրագործելու համար Հայաստանը պետք է օգտագործի տարբեր ոլորտներում առկա ողջ ներուժը՝ կիրառելով «փափուկ ուժի» տարաբնույթ գործիքներ՝ իր գրավչությունը մեծացնելու և համայն հայությանը համախմբելու համար:

Այս առումով ուշագրավ է Չինաստանի՝ որպես քաղաքական մի կենտրոնի փորձը, որը համեմատաբար վերջերս է սկսել կիրառել «փափուկ ուժ» արտաքին քաղաքական գործունեության մեջ: ՉԺՀ-ի նմանօրինակ քաղաքականության հիմնական գործիքներից է իր անկրկնելի քաղաքակրթական արժեհամակարգի քարոզչությունը, որն իրականացվում է, ի թիվս այլ միջոցների, նաև չինական սփյուռքի օգնությամբ:

1978 թվականի դեկտեմբերին ՉԿԿ կենտկոմի 11-րդ համագումարի 3-րդ պլենումում չինական սփյուռքը (հուացյաո) ստացավ «չինական հասարակության անքակտելի մասի» ոչ պաշտոնական կարգավիճակ: Այս ձևակերպումն արտացոլում է չինական սփյուռքի հետ հարաբերությունները վերականգնելու և խորացնելու վերաբերյալ Դեն Սյաոպինի գաղափարները: Սակայն պետք չէ մոռանալ, որ Մաո Ցզեդունի գլխավորությամբ, այսպես կոչված, չինական առաջնորդների առաջին սերնդի կառավարման օրոք ևս չինական սփյուռքը քաղաքական ուշադրության կենտրոնում էր, բայց այլ տեսանկյունից[6]: Մաո Ցզեդունի քաղաքական ծրագրով չինական սփյուռքը դիտվում էր որպես չինական համայնքներ ունեցող արտասահմանյան երկրներում մառիստական գաղափարները տարածելու հնարավորություն: Այս քաղաքականությունն անհաջողության մատնվեց՝ հանգեցնելով երկու բացասական հետևանքների: Նախ՝ դա զգալիորեն բարդացրեց չինական համայնքների վիճակը իրենց բնակության երկրներում՝ նրանցից ստեղծելով մառիստական գաղափարախոսության տարածման գործակալների կերպար. երկրորդ՝ նման քաղաքականությունը դժվարացրեց չինական սփյուռքի անդամների և Չինաստանում նրանց հարազատների միջև

[6] Տե՛ս **Hong Jiaze,** Dui haiwai huaren huaiqiao jingji yu zhongguo guanxi de chongxin sikao (Rethinking the relationship between the overseas Chinese economy and China). // Bianjiang jingji yu wenhua (Frontier Economy and Culture). 2009, № 8, էջ 32-34:

շփումների ավանդական ձևերը, ինչն ազդեց գյուղական կլանային համայնքների բարեկեցության և ՉԺՀ տնտեսության մեջ ներդրումների վրա: Դեն Սյաոպինի ուղղվածությունը արմատապես տարբերվում էր Մաոյի որդեգրածից, նա կիրառեց Չինաստանի և նրա սահմաններից դուրս ապրող հայրենակիցների միջև փոխգործակցության ավանդական ձևերը՝ շեշտը դնելով հիմնականում հասարակական-մշակութային փոխազդեցության և փոխադարձ տնտեսական շահերի վրա[7]:

ՉԺՀ-ի քաղաքացիական հասարակության և չինական սփյուռքի փոխգործակցությունն առաջին հերթին հիմնված է չինական հասարակության կլանային կառուցվածքի և ընտանեվարական ավանդույթների վրա: Չինական հասարակության կլանային կառուցվածքը տնտեսական ոլորտում երկրի ներսում գլխավորապես ոչ պաշտոնական բնույթի է՝ խաղի կանոնների համընդհանուր ըմբռնմամբ:

Դրա հետ մեկտեղ՝ Չինաստանում և հատկապես Հոնկոնգի, Թայվանի և Հարավարևելյան Ասիայի չինական սփյուռքի ընտանեկան ձեռնարկություններում տարածված է մի այնպիսի արժեք, որն անվանում են ժենցին, այսինքն՝ հարաբերություններ, որոնք գոյություն ունեն բիզնեսում զուտ նյութական շահերի շրջանակից դուրս: Չինական համայնքներում դա հաճախ դրսևորվում է դրսից եկած մարդկանց նկատմամբ ձեռնարկության սեփականատիրոջ անվստահությամբ և ընտանիքի անդամների ու ազգականների միջև պաշտոնների բաշխմամբ: Ընդ որում՝ անհատը նման ավանդույթի դեպքում մշտապես գտնվում է հասարակական երկու համակարգերի ներսում՝ ներընտանեկան (ներկլանային) և համապետական: Այսպիսով, նշյալ տեսակի հարաբերություններում «դեմքը կորցնելու» չինական հայեցակարգը կարող է դրսևորվել ինչպես ընտանիքի ներսում անհատապես «դեմքը կորցնելով», այնպես էլ ամբողջ ընտանիքի «դեմքը կորցնելով»՝ «արտաքին» աշխարհում նրա անդամի անփութության հետևանքով: Բացի այդ, չինական հասարակության մեջ, ավանդույթի համաձայն, դրամ վաստակած յուրաքանչյուր ոք ձգտում է առաջին հերթին հովանավորել իր տոհմական բնակավայրը[8]:

Ընդ որում՝ պետք է հաշվի առնել, որ չինական սփյուռքը, ի տարբերություն այլ ազգային սփյուռքների, չի ձգտում բնակության նոր վայրում հպատակագրվել: Հիմնական գաղափարը տնտեսական զարգացումն է, հարգանքը բնակության երկրում գործող վարչակարգի նկատմամբ, ինչպես նաև տնտեսական ազդեցության ոլորտների որոշակի շրջանակներ պահպանելու պատրաստակամությունը: Սակայն, միևնույն ժամանակ, սփյուռքը ձգտում է պահպանել մշակութային, լեզվական և սոցիալական ինքնավարությունը՝ ստեղծելով ինչ-որ առումով

---

[7] Տե՛ս **Нежданов В. Л.** Китайская диаспора и Китай: общественные и экономические отношения для взаимного политического блага // Общество и государство в Китае, Институт востоковедения РАН, М., 2017, էջ 245-253:

[8] Տե՛ս **Спешнев Н. А.** Китайцы: особенности национальной психологии. СПб., Каро, 2014, էջ 108-110:

զուգահեռ չինական իրականություն եվրոպական, ամերիկյան, մահմեդական կամ հարավարևելյան ասիական իրականության մեջ:

Եվ վերջապես, հարկ է նշել, որ ՉԺՀ-ն գիտակցում է իր շահերի լոբբինգի իրական հնարավորությունները չինական սփյուռքի բնակության երկրներում, ինչը չինական սփյուռքը դարձնում է տարածաշրջանում չինական քաղաքական հնարավորություններն իրացնելու կարևոր գործոն: Այս թեզը, անկասկած, կարևոր է ժամանակակից աշխարհում ՉԺՀ-ի քաղաքական ռազմավարությունը հասկանալու համար: Դրա հետ մեկտեղ՝ չինական սփյուռքը, որպես կանոն, ցույց չի տալիս իր վերաբերմունքը ՉԺՀ-ի նկատմամբ բնակության երկրների քաղաքական ոլորտում՝ ընդգծելով իր հարգանքը տեղի վարչակարգի նկատմամբ:

Ինչպես տեսնում ենք վերոշարադրյալից, չինական և հայկական համայնքների միջև նմանությունները շատ են: Սփյուռքի հետ հարաբերություններում Չինաստանի հաջող փորձը կարող է օգնել Հայաստանին զարգացնելու հարաբերություններն իր Սփյուռքի հետ, որը հինգ անգամ ավելի մեծ է, քան բուն Հայաստանի բնակչությունը:

Լինելով զարգացող տնտեսությամբ երկիր՝ Հայաստանը ի զորու չէ իր արտաքին քաղաքականության մեջ արդյունավետ օգտագործելու նյութական լծակները, հետևաբար հիմնականում ուշադրությունը կենտրոնացնում է հենց մշակութային-քաղաքակրթական կողմի վրա՝ հիմնավորելու Հայաստանի դերը որպես արևմտյան և արևելյան քաղաքակրթությունները կապող կամուրջի: Այս հարցում առանձնահատուկ դեր է խաղացել և շարունակում է խաղալ հայկական սփյուռքը, որն ամբողջ աշխարհին ներկայացնում է Հայաստանը, նրա լեզուն, մշակույթը, ավանդույթները, այդ թվում և քաղաքական շահերը: Շատ կարևոր է, որ այս գործում նա կարող է օգտագործել ոչ միայն ՀՀ-ի ռեսուրսների բազան, այլև հայկական համայնքների բազմաթիվ ներկայացուցիչների հնարավորությունները:

Հնագույն ժամանակներից սկսած՝ հայերն իրենց համայնքներն են հիմնել աշխարհի բազմաթիվ տարածաշրջաններում: Տիգրան Մեծի ժամանակներից ի վեր հայկական համայնքներ հայտնվեցին Կիլիկիայում, իսկ հետո բազմաթիվ կայսրությունների հալածանքների ժամանակներում, որոնց կազմում էր Հայաստանը, հայերը սկսեցին ցրվել ու բնակություն հաստատել աշխարհի բոլոր ծայրերում՝ հիմնելով իրենց համայնքները: Սակայն ժամանակակից հայկական սփյուռքը հիմնականում ձևավորվել է 1915 թվականի Հայոց ցեղասպանությունից հետո: Հենց այս փուլից էլ հայրենիքից հեռու ապրող հայերի շրջանում սկիզբ առավ քաղաքական գիտակցության ձևավորման գործընթացը, որն ընթացավ քաղաքական որոշակի պահանջների ձևավորմանը զուգահեռ՝ պատմական արդարության վերականգնում, Հայոց ցեղասպանության ճանաչում այլ երկրների կողմից, հայկական հզոր պետության ստեղծում ու զարգացում, ազատ և ժողովրդավարական հասարակության

կայացում, ինչպես նաև Արցախի անկախության ճանաչում[9]:

ՀՀ ազգային շահերն առաջ մղելու գործում առանձնահատուկ ներդրում է ունեցել հայկական լոբբին, որը ձևավորվել է հիմնականում Սփյուռքի շնորհիվ և, փորձագետների գնահատականներով, հզորությամբ աշխարհում երկրորդն է՝ զիջելով միայն հրեականին: Հայկական լոբբին գործունեություն է ծավալում Եվրոպայի, Ամերիկայի և աշխարհի այլ տարածաշրջանների բազմաթիվ երկրներում. նրանց շարքում ամենաուժեղը ԱՄՆ-ում գործող հայկական լոբբին է, որը մյուսների համեմատ առավել համախմբված ու ակտիվ է:

ԱՄՆ-ում լոբբինգը բաժանվում է երկու խմբի՝ գործադիր և օրենսդիր մարմինների լոբբիներ: Հայկական լոբբին հիմնականում կողմնորոշված է դեպի Կոնգրես՝ օրենսդիր իշխանություն: Լոբբիի աշխատանքի արդյունավետությունը որոշվում է Կոնգրեսում քննարկված, ընդունված կամ արգելափակված բանաձևերի քանակով: Իսկ այստեղ հայկական լոբբին միշտ լայնորեն ներկայացված է եղել: ԱՄՆ-ի երկուսուկես միլիոնանոց հայ բնակչությունն օգտագործում է որոշ նահանգներում, օրինակ՝ Կալիֆոռնիայում, իր համախմբված բնակության գործոնը:

Հայկական հասարակական կազմակերպություններից ու լոբբիներից զատ՝ վերջին շրջանում արդիական է դարձել «Սփյուռքի խորհրդարան» ստեղծելու հարցը: Ընդ որում, այն ներկայացնելու է պատմական հայրենիքից դուրս ապրող բոլոր հայերի շահերը: Սփյուռքի խորհրդարանի նախագիծը կարող է օգնել զարգացնելու Սփյուռքի քաղաքական գիտակցությունն ու համախմբվածությունը:

Առհասարակ, հայկական սփյուռքի հասարակական կազմակերպություններն ու նրա լոբբիստական կառույցներն ընդհանուր առմամբ դրսևորել են իրենց որպես հայկական «փափուկ ուժի» բավականին արդյունավետ գործիքներ: Դրանք անհրաժեշտ են ոչ միայն տարբեր երկրներում ազգային շահերն առաջ մղելու, այլև հայերի ինքնությունը պահպանելու և որպես հզոր՝ հնագույն մշակութային-քաղաքակրթական կոդ կրող ազգ դիրքավորելու համար:

Սակայն այս հաջողությունն ամրապնդելու համար «փափուկ ուժ» պետք է կիրառի նաև Հայաստանի Հանրապետությունը: Ընդ որում, «փափուկ ուժը» պետք է նպաստի Հայաստանի գրավչությունը մեծացնելուն ոչ միայն համաշխարհային հանրության, այլև սփյուռքահայերի համար: Չէ՞ որ արտաքին սպառնալիքները, սոցիալ-տնտեսական խնդիրները, զարգացման հստակ ռազմավարության բացակայությունը և այլ գործոններ բացասաբար են ազդում երկրի իմիջի վրա:

Հարկավոր է զարգացնել տնտեսությունը, ստեղծել բարենպաստ պայմաններ ձեռնարկատիրական գործունեության և ազատ մրցակցության համար, լուծել սոցիալական խնդիրները, որոնք շատ են ժամա-

---

[9] Տե՛ս **Լ. Ա. Խուրշուդյան,** Հայոց ազգային գաղափարախոսություն, Եր., ԵՊՀ հրատ., 1999, 282 էջ:

նակակից Հայաստանում: Նպատակահարմար է նաև կատարելագործել իրավական համակարգը և հոգալ դատարանների կոմպետենտության մասին, ինչը թույլ կտա քաղաքացիներին զգալ իրենց պետության կողմից պաշտպանված, որակապես նոր մակարդակի բարձրացնել հասարակական հարաբերությունները և վերականգնել սոցիալական արդարությունը: Այս ամենը, անկասկած, կնպաստի օտարերկրյա ներդրումների հոսքի զգալի աճին, ինչպես նաև Սփյուռքի մեր հայրենակիցներին կդարձնի Հայաստանի տնտեսական կյանքի ակտիվ մասնակիցներ:

ПАЙЛАК ЕНГОЯН – *Культурно-цивилизационные истоки политики «мягкой силы» Армении.* – Армянская и китайская цивилизации являются одними из древнейших в мире. Несмотря на различие в географическом положении, в масштабности и численности населения, у этих двух народов есть общие представления о международной жизни, и, в частности, о применении мягкой силы как во внешней политике, так и во внутринациональной среде, направленной вовнутрь, то есть на сохранение идентичности и сплоченности собственного народа на фундаменте национальной культуры. В настоящее время подавляющее большинство армянского народа находится в совершенно иной социокультурной среде. Встает вопрос о сохранении идентичности представителей армянской Диаспоры, ее культуры, языка, религии и самобытности, а также сплоченности всей армянской нации. В связи с этим, необходимо использовать успешный опыт Китая, сравнительно недавно применяющего мягкую силу во внешнеполитической деятельности. Одним из главных инструментов такой политики является пропаганда своей уникальной цивилизационной системы ценностей, которая осуществляется, в том числе, и с помощью зарубежной диаспоры.

Ключевые слова: *мягкая сила, идентичность, политическая концепция культуры, популяризация культуры, цивилизационные ценности*

PAYLAK YENGOYAN – *Cultural and Civilizational Origins of Armenia's "soft power" Policy.* – The Armenian and Chinese civilizations are among the oldest in the world. Despite the difference in geographical location, scale and population, these two nations have common ideas about international life, and, in particular, the use of soft power both in foreign policy and directed "inward" to preserve identity and cohesion on the grounds of the national culture. At present, the vast majority of the Armenian people are in a completely different social and cultural environment. The issue arises about preserving the Armenian identity among the Diaspora, its culture, language, religion and the cohesion of the entire Armenian nation. In this regard, it is necessary to use the successful experience of China, which has relatively recently used soft power in its foreign policy. One of the main tools of such a policy of the PRC is the propaganda of its unique civilizational value system, which is carried out with different methods and with the help of the foreign diaspora as well.

Key words: *soft power, identity, political culture concept, popularization of culture, civilizational values*